

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվակմամբ վարկային հաշվիչից օգտվելու

Հաշվիչը գործարկելու համար անհրաժեշտ է Ձեր համակարգում, որևէ Microsoft Excell ֆայլում նշել Tools, այնուհետև Add-Ins... և ակտիվացնել Analysis ToolPak պատուհանը, որից հետո միայն բացել «Փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ձևը»:

1. Ընդհանուր դրույթներ

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվակմամբ վարկային հաշվիչը իրենից ներկայացնում է Microsoft Excell ծրագրային միջավայրում մշակված հաշվարկային ֆայլ: Այն կառուցված է 2 վահանակներից՝ նվազող և հաստատուն մարումներով վարկերի հաշվարկման համար համապատասխանաբար: Վահանակները նախապես ֆորմատավորված են տպագրման համար հարմար ֆորմատով (A4):

2. Դաշտերի լրացումը

2.1. Լրացվում են միայն կապույտ գույնով նշված դաշտերը՝ մյուս դաշտերը փոփոխման ենթակա չեն:

2.2. Դաշտերի արժեքները, ինչպիսիքն են վարկի տրամադրման տոկոսադրույքը, վարկի սպասարկման և վարկային հայտի ուսումնասիրության միջնորդավճարները և այլն, կարող եք լրացնել օգտվելով կայքում տեղակայված տվյալներից

2.3. Վարկի տրամադրման ժամկետը կարող եք լրացնել ինքնուրույն՝ համենատեղով Բանկի կողմից տրամադրվող վարկատեսակների ժամկետների հետ:

2.4. Վարկի տրամադրման օրը կարող եք ընտրել ինքնուրույն՝ միայն աշխատանքային օր:

2.5. Եթե Ձեր կողմից հաշվարկվող վարկատեսակի գումարը ցանկանում եք ստանալ կանխիկ, ապա «Կանխիկ/Անկանխիկ» դաշտում ընտրեք «այո»:

2.6. Եթե Ձեր կողմից հաշվարկվող վարկատեսակը պահանջում է գրավային ապահովվածություն և գրավի առարկան ենթակա է ապահովագրման, ապա լրացրեք «Ապահովագրության վճարի տոկոս» դաշտուրը

3. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի օրինակներ

Օրինակ 1

Կենցաղային ապրանքներ և կահույքի ձեռք բերում

- վարկի գումար - 1,500,000 ՀՀ դրամ
- վարկի ժամկետ - 24 ամիս
- տարեկան տոկոսադրույք - 24%
- վարկային հայտի ուսումնասիրության միջնորդավճար - 1000 ՀՀ դրամ
- վարկի սպասարկման միջնորդավճար - 2000 ՀՀ դրամ

Փաստացի տոկոսադրույքը կազմում է 27.1059%

Օրինակ 2

Համագործակցության պայմանագրերի շրջանակներում նոր տրանսպորտային միջոցի ձեռք բերման վարկավորման դեպքում /առաջնային շուկա/.

- վարկի գումար - 5,000,000 ՀՀ դրամ
- վարկի ժամկետ - 60 ամիս
- տարեկան տոկոսադրույք - 17%
- վարկային հայտի ուսումնասիրության միջնորդավճար - 5,000 ՀՀ դրամ
- վարկի սպասարկման միջնորդավճար - 20,000 ՀՀ դրամ
- կանխիկացման վճար - 0.3 %
- ապահովագրություն - 2%

Փաստացի տոկոսադրույքը կազմում է 22.7924%

Օրինակ 3

Համագործակցության պայմանագրերի շրջանակներում օգտագործված և շրջանակներից դուրս նոր և օգտագործված տրանսպորտային միջոցի ձեռք բերման վարկավորման դեպքում/երկրորդային շուկա/.

- վարկի գումար - 5,000,000 ՀՀ դրամ
- վարկի ժամկետ - 36 ամիս
- տարեկան տոկոսադրույք - 21%
- վարկային հայտի ուսումնասիրության միջնորդավճար - 5,000 ՀՀ դրամ
- վարկի սպասարկման միջնորդավճար - 10,000 ՀՀ դրամ
- կանխիկացման վճար - 0.3 %
- գրավի առարկայի գնահատում 15,000 ՀՀ դրամ
- նոտարական վճարումներ - 20,000 ՀՀ դրամ
- ապահովագրություն - 2%

Փաստացի տոկոսադրույքը կազմում է 28.6094%

Օրինակ 4

Կրթական վարկի տրամադրման դեպքում.

- վարկի գումար - 400,000 ՀՀ դրամ
- վարկի ժամկետ - 10 ամիս
- տարեկան տոկոսադրույք - 20%
- վարկային հայտի ուսումնասիրության միջնորդավճար - 1500 ՀՀ դրամ
- վարկի սպասարկման միջնորդավճար - 3000 ՀՀ դրամ
- կանխիկ միջոցների տրամադրում - 0.3 %

Փաստացի տոկոսադրույքը կազմում է 26.0733%

Օրինակ 5

Տուրիստական վարկի տրամադրման դեպքում.

- վարկի գումար - 800,000 ՀՀ դրամ
- վարկի ժամկետ - 12 ամիս
- տարեկան տոկոսադրույք - 21%
- վարկային հայտի ուսումնասիրության միջնորդավճար - 1500 ՀՀ դրամ
- վարկի սպասարկման միջնորդավճար - 5000 ՀՀ դրամ
- կանխիկ միջոցների տրամադրում - 0.3 %

Փաստացի տոկոսադրույքը կազմում է 25.9115%

Օրինակ 6

Ոսկու գրավով վարկերի տրամադրման դեպքում

- վարկի գումար - 5,000,000 ՀՀ դրամ
- վարկի ժամկետ - 6 ամիս
- տարեկան տոկոսադրույք - 21%
- վարկային հայտի ուսումնասիրության միջնորդավճար - 600 ՀՀ դրամ

Փաստացի տոկոսադրույքը կազմում է 23.2020%

Օրինակ 7

Ֆիզիկական անձանց շարժական և անշարժ գույքի գրավի ապահովվածությամբ վարկերի տրամադրման դեպքում

- վարկի գումար - 10,000,000 ՀՀ դրամ
- վարկի ժամկետ - 36 ամիս
- տարեկան տոկոսադրույք - 23%
- վարկային հայտի ուսումնասիրության միջնորդավճար - 5,000 ՀՀ դրամ
- վարկի սպասարկման միջնորդավճար - 15,000 ՀՀ դրամ
- կանխիկ միջոցների տրամադրում - 0.3 %
- գրավի առարկայի գնահատում 15,000 ՀՀ դրամ
- նոտարական վճարումներ - 20,000 ՀՀ դրամ
- կադաստրային վճար - 12,500

Փաստացի տոկոսադրույքը կազմում է 26.5789%

Պայմանավորված վարկի գումարով, ժամկետով, մարումների հաճախականությամբ և ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների արժեքի փոփոխություններով՝ ցանկացած վարկատեսակի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է տարբեր լինել վերոնշյալ օրինակներից: